ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

ԴԱՍ 2

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԴՐԱՁԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

«Հեռաուսուցման դասընթացների մշակում Արդարադատության ակադեմիայի համար» ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ Պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից և իրականացվել է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից՝ Արդարադատության ակադեմիայի հետ գործընկերությամբ: Սույն նյութում արտացոլված են հեղինակների տեսակետները, մեկնաբանությունները և եզրակացությունները, որոնք կարող են չհամընկնել ԱՄՆ Պետքարտուղարության տեսակետների հետ:

ԴԱՍ 2

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐՋԱՆԱԿԸ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս դասը կազմված է հետևյալ 4 բաղադրիչներից.
մոտիվացնող ներածական տեսանյութ,
դասի տեսական նյութ,
բառարան և
ինքնաստուգիչ հարցեր:
Բոլոր բաղադրիչների յուրացման համար
Ձեզ հարկավոր է 4 ժամ:

Ինքնաստուգիչ հարցերը և բացատրություններով ուղեկցվող դրանց պատասխանները ներառված չեն այս ձեռնարկում:

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ

Տեսանյութն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 5 րոպե:

Ուշադրությամբ կարդացեք դասի տեսական մասը՝ օգտվելով բառարանից, և այն յուրացնելուց հետո միայն պատասխանեք ինքնաստուգիչ հարցերին:
Այս աշխատանքների համար անհրաժեշտ է մոտ 210 րոպե:

Կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը կանխորոշող գործոններից մեկն այն հանցավոր արարքների շրջանակի սահմանումն է, որոնք դիտարկվում են որպես կոռուպցիոն հանցագործություններ:

Հարկ է նշել, որ քրեաիրավական ոլորտում կոռուպցիայի միասնական օրենսդրական սահմանում չկա ո՛չ ներպետական, ո՛չ միջազգային իրավական մակարդակով:

Կոռուպցիայի ընորոշման մի տարբերակ ներկայացված է ԵԽ կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիայի (1) 2-րդ հոդվածում, որը սահմանում է, որ նշված կոնվենցիայի իմաստով կոռուպցիան դիտվում է որպես ուղղակիորեն կամ անուղղակիորեն կաշառք կամ որևէ անհիմն օգուտ կամ այդպիսի օգուտի խոստում պահանջելը, առաջարկելը, տալը կամ ընդունելը, որը խախտում է կաշառք, անհիմն օգուտ կամ այդպիսի օգուտի խոստում պահանջողի կողմից ցանկացած

պարտականության պատշաճ կատարումը կամ պահանջվող վարքագիծը: Ակհայտ է, որ ներկայացված բնորոշումն առավելապես վերաբերում է կաշառակերությանը, մինչդեռ Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան (2) կոռուպցիայի դեմ պայքարի առումով անհրաժեշտ է համարում որ միայն կաշառակերության, այլև պաշտոնեական դիրքի չարաշահման, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, ապօրինի հարստացման, ազդեցության չարաշահման, պաշտոնատար անձի կողմից՝ իր ծառայողական դրության ուժով իր տնօրինության տակ գտնվող գույքի հափշտակության կամ դրա ոչ նպատակային օգտագործման քրեականացումը: Ընդ որում, հիշյալ կոնվենցիան պահանջում է ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր ոլորտներում տեղ գտնող կոռուպցիոն հանցագործությունների քրեականացում:

Ներպետական մակարդակով կոռուպցիոն հանցագործություններին անդրադարձ արվել է 2021 թ.-ի մարտի 24-ին ընդունված «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի (3) 3-րդ հոդվածում, որի 5-րդ կետը սահմանում է, թե որոնք են կոռուպցիոն հանցագործությունները, այն է՝ ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների ցանկի մեջ մտնող հանցագործությունները:

Ծանոթացեք երկու միջազգային կոնվենցիաների շրջանակներում ներկայացված կոռուպցիայի սահմանումներին: Ըստ Ձեզ՝ արդյո՞ք Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիայում տեղ գտած կոռուպցիայի բնորոշումն ամբողջությամբ և սպառիչ կերպով ներկայացնում է կոռուպցիոն հանցագործությունների շրջանակը:

ՀՀ գործող քրեական օրենսգրքում առանձին ցանկով ներկայացված են հետևյալ կոռուպցիոն հանցագործությունները.

- Ընտրողներին կաշառք տալը, կաշառք ստանալը, ընտրությունների ժամանակ բարեգործության արգելքի խախտումը կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելը.
- Ընտրակաշառքի միջնորդությունը.
- Կուսակցության օգտին խոշոր չափով ապօրինի նվիրատվություն ներգրավելը.
- Կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված չափը չգերազանցելու արգելքը կամ օրենքով չնախատեսված աղբյուրներից նվիրատվությունների արգելքը խոշոր չափով շրջանցելը.
- Խարդախությունը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով.
- Յուրացնելը կամ վատնելը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով.
- Ֆինանսական բուրգ ստեղծելը, կազմակերպելը կամ ղեկավարելը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով.
- Հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելը (փողերի լվացում).
- Ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործումը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով.
- Գնային չարաշահումը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով.
- Հակամրցակցային գործունեությունը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով.
- Առևտրային կաշառքը.
- Արհեստավարժ մարզամրցումների և հանդիսադիր առևտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելը.
- Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը.
- Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը.

- Պաշտոնեական լիազորություններն անցնելը.
- Ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը.
- Ապօրինի հարստանալը.
- Կաշառք ստանալը.
- Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի, հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը.
- Իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելը.
- Կաշառք տալը.
- Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձին, հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալը.
- Իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալը.
- Կաշառքի միջնորդությունը.
- Պաշտոնեական կեղծիքը.
- Հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելը.
- Հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը.
- Արդարադատության իրականացմանը և քննությանը խոչընդոտելը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով.
- Ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը.
- Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը:

Ներկայացված ցանկում տեղ գտած հանցագործությունները տեղ են գտել նաև 2021թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքում կոռուպցիոն հանցագործությունների ցանկում: Միաժամանակ, այց ցանկը համալրվել է՝ ներառելով նաև՝

Ծանոթացեք օրենսդրական փոփոխություններին:

- Հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելը,
- Շորթումը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,
- Արժեթղթերի շուկայում գնային չարաշահումը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,
- Ծառայողական կամ մասնագիտական պարտականությունները կատարելու համար ապօրինի վարձատրություն ստանալը կամ պահանջելը,
- Մասնավոր ոլորտում ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը,
- Կաշառք ստանալու, կաշառքի միջնորդության կամ իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով օգտագործելու պատրվակով գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալը,
- Կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիան,

- Ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը,
- Քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելը,
- Դատավարության մասնակիցներին՝ իրենց լիազորությունների հետ կապված կաշառք տալը,
- Դատավարության մասնակիցների կողմից իրենց լիազորությունների հետ կապված կաշառք ստանալը:

Կոռուպցիոն հանցագործությունների ներկայացված շրջանակի ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել հանրային/պետական ոլորտում և մասնավոր ոլորտում կոռուպցիայի դրսևորում հանդիսացող հանցավոր արարքները:

Միևնույն ժամանակ, հիշյալ ցանկում տարբերակվում են միևնույն հանցավոր արարքի ընդհանուր և հատուկ դրսևորում հանդիսացող հանցակազմերը, օրինակ՝ պաշտոնեական դիրքի չարաշահումը և ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը: Նման դեպքերում, եթե գործ ունենք կոռուպցիայի դրսևորում հանդիսացող արարքները նկարագրող ընդհանուր և հատուկ նորմերի հետ, ապա քրեաիրավական նորմերի մրցակցության կանոնների համաձայն՝ արարքը պետք է որակվի միայն հատուկ նորմով:

Կոռուպցիոն հանցագործությունների առավել ցայտուն դրսևորումը կաշառակերություն հանդիսացող արարքներն են, որոնք թե՛ գործող քրեական օրենսգրքով, թե՛ 2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքով կարող են տեղ գտնել ինչպես մասնավոր ոլորտում, այնպես էլ հանրային շահերը կանոնակարգելիս:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 311, 311.1-ին, 312, 312.1-ին, 313-րդ հոդվածները պատասխանատվություն են սահմանում պաշտոնատար անձի կամ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից կաշառք/ապօրինի վարձատրություն ստանալու, նշված անձանց կաշառք/ապօրինի վարձատրություն տալու, ինչպես նաև կաշառքի միջնորդության համար:

Ուշադրություն դարձրեք կաշառք ստանալու հանցակազմի նոր ձևակերպմանը:

Հետևելով Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի պահանջներին՝ հայ օրենսդիրը կաշառք ստանալը սահմանել է որպես՝ պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալը կամ պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ իր պաշտոնեական դիրքն օգտագործելով այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար:

Հիշյալ ձևակերպումից հետևում է, որ գործ ունենք ձևական հանցակազմի հետ. ավարտված հանցակազմի համար բավարար է կաշառքի առարկան պահանջելը կամ կաշառքի առարկային տիրանալու առաջարկը կամ խոստումն ընդունելը, և նման դեպքում արդեն էական էլ չէ՝ անձը փաստացի կստանա կաշառքի առարկան, թե ոչ: Նաև էական չէ՝ կաշառքի առարկան ստանալուց հետո, այն վերցնող անձը պայմանավորված գործողությունը կամ անգործությունը կիրականացնի, թե ոչ: Միևնույնն է՝ նման դեպքերում ևս առկա է կաշառք ստանալու ավարտված հանցակազմ, ինչը փաստվել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից՝ Էդ. Ջաքարյանի և ուրիշների վերաբերյալ գործով 15.08.2014թ. թիվ 67 ԵԿԴ/0002/01/13 որոշման 21-րդ կետում: Ընդ որում, հիշյալ ձևակերպման՝ ՀՀ Սահմանադրության համապատասխանության հարցը քննարկվել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանի 19.11.2013

թ.-ի որոշմամբ՝ ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի, Երևանի Կենտրոն և Նորք-մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի և Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով: Հիշյալ գործի շրջանակներում բարձրացվող հարցերից մեկն այն էր, որ նման ձևակերպումն անհնարին է դարձնում հանցագործությունից կամովին հրաժարվելու ինստիտուտի կիրառումը, քանի որ հենց կաշառքի առաջարկը կամ խոստումն ընդունելու կամ կաշառքի առարկան պահանջելու պահից այն դիտվում է ավարտված, մինչդեռ հնարավոր է, որ պաշտոնյան հետագայում կամովին հրաժարվի կաշառքի առարկան ստանալուց և պայմանավորվածությունը կատարելուց, սակայն նման դեպքերում, ըստ ներկայացված ձևակերպման, նա միևնույնն է, պետք է ենթարկվի պատասխանատվության:

Այնուհանդերձ, ՀՀ Սահմանադրական դատարանն այս գործով փաստեց, որ Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիան վավերացնելիս՝ ՀՀ Սահմանադրական դատարանն արդեն իսկ արտահայտել է այս դրույթի նկատմամբ իր վերաբերմունքը և այն հակասահմանադրական չի դիտել:

Կաշառք ստանալու քննարկվող ձևակերպման էության բացահայտման համար կարևոր է հստակեցնել, թե որ արարքները կարող են դիտարկվել որպես կաշառք պահանջել:

Այս հարցին անդրադարձել է ՀՀ Վճռաբեկ դատարանը՝ Էդ. Ջաքարյանի և ուրիշների վերաբերյալ գործով 15.08.2014թ. թիվ 67 ԵԿԴ/0002/01/13 որոշման 21-րդ կետում (4), սահմանելով, որ՝ «պահանջը կարող է արտա-

Ինչպիսի՞ մասնագիտական դիրքորոշում ունեք այս հարցի կապակցությամբ:

Մինչ հաջորդ պարբերությամբ «պահանջ» եզրույթը բնութագրող եղանակներին ծանոթանալը, փորձեք տրամաբանորեն ենթադրել դրանք:

հայտվել հրամանի, կարգադրության, համոզելու, շահագրգռելու, անձի գիտակցության և կամքի վրա ներազդելու այլ եղանակներով, որը, սակայն, կապված չէ անձի նկատմամբ սպառնալիք գործադրելու հետ: Քննարկվող հանցագործությունը ձևական է և ավարտված է համարվում պահանջ ներկայացնելու պահից՝ անկախ կաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության ձեռքբերման, կաշառքի առարկան հետագայում ստանալու կամ չստանալու, պաշտոնատար անձի կողմից կաշառք տվողի օգտին պայմանավորված գործողությունները կատարելու կամ չկատարելու հանգամանքից: Պաշտոնատար անձը կաշառք կարող է պահանջել անձամբ կամ միջնորդի միջոցով, գրավոր կամ բանավոր, հեռախոսով, էլեկտրոնային փոստով, այլ հաղորդումներով կամ այլ եղանակով, որոնք, սակայն, արարքի որակման համար որևէ նշանակություն չունեն»:

Վճռաբեկ դատարանը չի հստակեցրել, թե արդյոք պահանջի հասկացության ներքո կարող է դիտարկվել անձի խնդրանքը: Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի համաձայն՝ պաշտոնատար անձի կողմից ապօրինի վարձատրության/ կաշառքի խնդրանքը, ապօրինի վարձատրության/կաշառքի առումով նախաձեռնությամբ հանդես գալը ևս պետք է դիտարկվի որպես հանցագործություն: Այս առումով առավել հստակ է 2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգիրքը, որի 435-րդ հոդվածը կաշառք ստանալու օբյեկտիվ կողմը նկարագրում է հետևյալ արարքներով՝ կաշառք ստանալը, պահանջելը, կաշառք տալու առաջարկ ներկայացնելը կամ կաշառք տալու առաջարկը կամ խոստումն ընդունելը:

Մինչդեռ ՀՀ գործող քրեական օրենսգրքի համաձայն՝ մեկնաբանությունները պետք է կատարվեն «պահանջել» հասկացության շրջանակներում. Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» համաձայն՝ «պահանջել» հասկացության տարբերակներից մեկը նաև խնդրելն է (5), հետևաբար կաշառք ստանալ պետք է դիտարկել նաև այն իրավիճակները, երբ պաշտոնատար անձը հանդես է գալիս իրեն կաշառքի առարկան փոխանցելու խնդրանքով:

Էդ. Ջաքարյանի գործով որոշման մեջ ՀՀ Վճռաբեկ դատարանը հստակեցրել է նաև, որ պաշտոնատար անձի կողմից ներկայացված ցանկացած պահանջ չէ, որը կարող է վկայել կաշառք ստանալու հանցակազմի հատկանիշների առկայության մասին: Հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների առկայությունը հավաստելու համար անհրաժեշտ է, որ ներկայացվող պահանջը լինի կոնկրետ, առկա և իրական, իսկ այս չափանիշներին չհամապատասխանող, զուտ անձի դիտավորությունը բացահայտող պահանջ ներկայացնելը չի կարող հանցագործություն համարվել: Այսպիսով, պահանջն առկա է, եթե այն ներկայացված, ձևակերպված է եղել:

Պահանջի կոնկրետությունը ենթադրում է հստակություն պաշտոնատար անձի կողմից պահանջվող կաշառքի առարկայի և դրա չափերի հարցում: Մասնավորապես, հանցավորի ներկայացրած պահանջը դրամի, գույքի, գույքի նկատմամբ իրավունքի և կաշառքի այլ առարկաների ու դրանց չափերի վերաբերյալ պետք է լինի կոնկրետ և հստակ, կաշառք տվողի, մասնավորապես՝ վկայի, համար՝ ակնհայտ, թե հանցավորը որպես կաշառք ինչ է պահանջում և ինչ չափով է պահանջում: Վերոնշյալ հանգամանքը հատկապես կարևոր է այն առումով, որ կաշառքի առարկան հանդիսանում է հանցակազմի պարտադիր հատկանիշ և կախված դրա չափերից՝ ազդում արարքի որակման վրա:

Պահանջի իրական լինելը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել գործի բոլոր փաստական

Նախքան նյութի հաջորդ հատվածը կարդալը, փորձեք ինքնուրույն մտածել և պարզաբանել, թե ինչ է ենթադրում պահանջի կոնկրետությունը և իրական լինելը:

հանգամանքները՝ պահանջի ներկայացման եղանակը, ինտենսիվությունը (օրինակ՝ ներկայացված պահանջը կրկին վերահաստատելը), իրադրությունը, տեղը, ժամանակը և այլն: Մասնավորապես, պահանջի արտահայտման եղանակից, ինտենսիվությունից և այլ օբյեկտիվ հանգամանքներից կախված՝ կաշառք տվողը պետք է բավարար հիմքեր ունենա կարծելու, որ պաշտոնատար անձն իր կամ այլ անձի օգտին համապատասխան արարքը կատարելու է միայն ներկայացված պահանջն ի կատար ածելու դեպքում: Կաշառք պահանջող պաշտոնատար անձն էլ, իր ներկայացրած պահանջը կատարելու դեպքում, պետք է իրական մտադրություն ունենա իր լիազորությունները կամ պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ որոշակի գործողություն կատարել կամ չկատարել կաշառք տվողի օգտին և գիտակցի, որ կաշառքն իրեն տրվում է հենց դրա համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե կաշառք տալու վերաբերյալ ներկայացված պահանջն իրական չի եղել, կաշառք տվողի օգտին որոշակի գործողություն կատարելու կամ չկատարելու համար պարտադիր պայման չի հանդիսացել, այլ կրել է ձևական բնույթ, այն կաշառք ստանալու հանցակազմի իմաստով չի կարող պահանջ համարվել և վկայել քննարկվող հանցագործության առկայության մասին: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կաշառք պահանջելու հանցակազմն ավարտված է համարվում ոչ թե կաշառքի չափերի վերաբերյալ վերջնական համաձայնության ձեռքբերման պահից, այլ այն պահից, երբ հանցավորը ներկայացնում է կոնկրետ և իրական պահանջ (6):

Կաշառքի առարկան կարող է փոխանցվել ինչպես պաշտոնատար անձին, այնպես էլ նրա մատնանշած անձին, ընդ որում, պարտադիր չէ, որ կաշառքի առարկան ի վերջո հասնի պաշտոնատար անձին. այն կարող է նախատեսված լինել պաշտոնատար անձի մատնանշած անձի համար: Կաշառքի առարկան պաշտոնատար անձին կարող է փոխանցվել ինչպես կաշառք տվողի կողմից, այնպես էլ միջնորդի: Կաշառքի առարկան պաշտոնատար անձին կարող է տրվել նախապես՝ մինչ ակնկալվող վարքագծի դրսևորումը կամ ցանկալի վարքագծի դրսևորումից հետո, պայմանով, որ պաշտոնատար անձը գիտակցել է, որ դա տրվում է որպես «շնորհակալություն» կատարված կամ կատարվելիք արարքի համար:

Կաշառք ստանալու հանցակազմի վերլուծությունից հետևում է, որ կաշառքը պաշտոնատար անձին տրվում է կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին՝

1 պաշտոնատար անձի լիազորությունների մեջ մտնող որևէ գործողություն կատարելու կամ դրանից ձեռնպահ մնալու համար,

2 որևէ գործողություն (անգործություն) կատարելուն նպաստելու համար, որը պաշտոնատար անձը կարող է անել՝ իր պաշտոնեական դիրքն օգտագործելով,

3 ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար,

4 պաշտոնատար անձի կողմից ապօրինի գործողության (անգործության) համար:

Հետևաբար՝ կաշառք ստանալու հանցակազմն առկա է ինչպես այն դեպքերում, երբ պաշտոնատար անձն իրականացնում է իր լիազորությունների մեջ մտնող գործողություններ և ակնկալվող վարքագիծ, այնպես էլ՝ երբ դուրս է գալիս իր լիազորություններից, դրսևորում հակաօրինական վարքագիծ կամ օգտագործում պաշտոնով պայմանավորված իր ազդեցությունը՝ որոշակի արարքի կատարմանը նպաստելու կամ հովանավորչության կամ թողտվության համար:

Ուշադրություն դարձրեք կաշառք ստանալու հանցակազմի առանձնահատկություններին:

Կաշառք ստանալու հանցակազմի պարագայում կարևոր նշանակություն ունի նաև կաշառքի առարկայի պարզաբանումը, որը ՀՀ գործող քրեական օրենսգրքով սահմանվում է որպես՝ դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն:

Ներկայացված հասկացություններից պարզաբանման կարիք ունի, թերևս, «որևէ այլ առավելություն» հասկացությունը: Եթե ՀՀ օրենսդրությունը հստակեցնում է, թե ինչ պետք է հասկանալ գույքի, գույքի նկատմամբ իրավունքի, արժեթղթերի հասկացության ներքո, ապա «որևէ այլ առավելություն» հասկացությունը որևէ կերպ բացահայտված չէ: Քրեական իրավունքի տեսական աղբյուրների,

Նախքան նյութի հաջորդ հատվածին անցնելը, փորձեք բերել «որևէ այլ առավելության» դրսևորման մի քանի օրինակ, ապա շարունակեք ընթերցել նյութը և ինքներդ Ձեր համար ամփոփեք Ձեր բերած օրինակների ճշգրտությունը:

ինչպես նաև Կոռուպցիայի դեմ պայքարում ներառված միջազգային կառույցների զեկույցների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ որևէ այլ առավելությունը հիմնականում դրսևորվում է տարաբնույթ, այդ թվում՝ ոչ գույքային ծառայությունների մատուցմամբ (7): Այս հասկացության ներքո մտնում են նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված ծառայությունների շարքին չդասվող, ոչ լեգալ ծառայությունները (8):

Ծանոթացեք օրենսդրական կարևոր փոփոխությունների:

Կաշառքի առարկայի առավել մանրամասն բնորոշում տրված է 2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածում, որը որպես այդպիսին է դիտում գույքը, նեղառայալ դրամական միջոցը, արժեթուղթը, վճարային այլ գործիքը, գույքի նկատմամբ իրավունքը, ծառայությունը կամ որևէ այլ առավելությունը: Հիշյալ ձևակերպումն առավել հասցեական է և թույլ է տալիս կաշառքի առարկա դիտարկել, օրինակ, կրիպտոարժույթը:

Այս մասին ավելի մանրամասն տեղեկություններ կստանաք 3-րդ դասի շրջանակում:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի փոփոխություններից մյուսը վերաբերում է ՀՀ գործող քրեական օրենսգրքում տեղ գտած՝ կաշառք ստանալու և պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու հանցակազմերի միավորմանը: Նման փոփոխությունը պայմանավորված է նրանով, որ օբյեկտիվ կողմից նույնական արարքների տարբերակման հիմքը սուբյեկտն է. ՀՀ նոր քրեական օրենսգրքում վերանայվել է պաշտոնատար անձի հասկացությունը՝ ներառելով նաև հանրային ծառայողներին, հետևաբար վերացել է այս արարքներն առանձին հոդվածներով նախատեսելու անհրաժեշտությունը:

Բացի պասիվ կաշառակերությունից՝ ՀՀ գործող քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում նաև ակտիվ կաշառակերության՝ կաշառք կամ ապօրինի վարձատրություն տալու համար:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում պաշտոնատար անձին կաշառք տալու համար՝ պաշտոնատար անձին անձամբ կամ միջնորդի միջոցով նրա կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալու կամ առաջարկելու կամ տրամադրելու համար՝ իր կամ իր ներկայացրած անձանց օգտին պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքն օգտագործելով այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար:

Ինչպես և կաշառք ստանալու պարագայում՝ կաշառք տալու հանցակազմը ևս ձևական է. ավարտված է համարվում կաշառքի առարկան առաջարկելու, խոստանալու կամ տրամադրելու պահից՝ անկախ պաշտոնատար անձի հետագա վարքագծից: Ընդ որում, կաշառք տալն համարվում է ավարտված կաշառքի առարկան առաջարկելու կամ խոստանալու պահից, նույնիսկ եթե հետագայում կաշառքի առարկան օբյեկտիվորեն հնարավոր էլ չի լինում տրամադրել:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, և մինչև կաշառք տալու մասին քրեական հետապնդման մարմիններին հայտնի դառնալը, հանցանքի կատարումից հետո՝ ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, այդ անձն այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին և աջակցել հանցագործությունը բացահայտելուն:

Փորձեք հիշել խրախուսական նորմի կիրառման գործնական դեպքեր:

Օբյեկտիվորեն, նշված գործոնների միաժամանակյա առկայությունը քիչ դեպքերում է հանդիպում, հետևաբար՝ ներկայացված խրախուսական նորմի կիրառությունը հազվադեպ է: Այնուհանդերձ, Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ/GRECO), ինչպես նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից, տարբեր երկրներում նման խրախուսական նորմերին անդրադառնալիս (9), բազմիցս նշվել է, որ կաշառք տալու պարագայում քրեական պատասխանատվությունը բացառող նման անվերապահ դրույթի գոյությունը հիմնավորված չէ, և կաշառք տվողին քրեական պատասխանատվությունից ազատելը պետք է լինի անհատականացված մոտեցման արդյունք:

Ուշադրություն դարձրեք և ծանոթացեք օրենսդրական այս կարևոր փոփոխությանը:

2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածում հիշյալ խրախուսական նորմը բացակայում է, և կաշառք տվող անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասում տեղ գտած՝ քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերի առկայության դեպքում: Կաշառք տալու առումով՝ նոր քրեական օրենսգիրքն էական փոփոխություններ չի նախատեսում, միայն կաշառք ստանալու հանցակազմի նկարագրմանը համահունչ՝ կաշառքի առարկան բնութագրելիս նաև մատնանշում է վճարային այլ գործիքները:

Կոռուպցիոն հանցագործությունների շարքում, կաշառակերությունից բացի, էական տեսակարար կշիռ են կազմում պաշտոնեական լիազորությունների չարաշահման և սահմանն անցնելու դեպքերը:

ՀՀ գործող քրեական օրենսգիրքը պաշտոնեական լիազորությունների չարաշահում է դիտարկում պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությու-

նից կամ խմբային շահերից ելնելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը): Ինչ վերաբերում է պաշտոնեական լիազորություններն անցնելուն, ապա որպես այդպիսին դիտարկվում է պաշտոնատար անձի կողմից դիտավորությամբ այնպիսի գործողություններ կատարելը, որոնք ակնհայտորեն դուրս են եկել նրա լիազորությունների շրջանակից և էական վնաս են պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը):

2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքում այս երկու հանցակազմերը միավորվել են, և օրենսգրքի 441-րդ հոդվածով պատասխանատվություն է սահմանվում պաշտոնատար անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն ի վնաս պետական կամ ծառայողական շահերի օգտագործելու կամ իր ծառայողական պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ այնպիսի արարք կատարելու համար, որը չի բխում իր լիազորություններից կամ դուրս է իր լիազորությունների շրջանակից, որն էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին:

Ծանոթացեք օրենսդրական կարևոր փոփոխությունների:

Թե՛ գործող քրեական օրենսգիրքը, և թե՛ ՀՀ նոր քրեական օրենսգիրքը պաշտոնական լիազորությունների չարաշահումն ու անցումը նկարագրում են նյութական հանցակազմով՝ քրեական պատասխանատվություն սահմանելով միայն այն դեպքերի համար, երբ առաջ են եկել կոնկրետ հետևանքներ: Պաշտոնական լիազորությունների չարաշահման առանձին դեպքերում, օրինակ՝ հատուկ դրսևորումների՝ ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու, ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու պարագայում, օրենսդիրը դրանք նկարագրում է ձևական հանցակազմերի միջոցով:

Նպատակ և օբյեկտիվ հնարավորություն չունենալով կոռուպցիոն հանցագործությունների բոլոր դրսևորումները և դրանց որակման առանձնահատկությունները ներկայացնել այս դասի շրջանակներում, այնուհանդերձ անդրադառնանք ևս երկուսին՝ Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի և Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի ԵԽ կոնվենցիաներում տեղ գտած ազդեցության չարաշահման և ապօրինի հարստացման հանցակազմերին:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 311.2 և 312.2-րդ հոդվածները պատասխանատվություն են սահմանում ազդեցության չարաշահման պասիվ և ակտիվ դրսևորումներին: Մասնավորապես, ՀՀ գործող քրեական օրենսգրքի 311.2-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով օգտագործելու համար, այն է՝ անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար դրամի, գույքի, գույքի նկատմամբ իրավունքի, արժեթղթերի կամ որևէ այլ առավելություն ստանալը կամ պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց օգտին որևէ պաշտոնատար անձի կամ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի, հանրային ծառայողի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար:

Ընդհանուր հատկանիշներով այս հանցակազմը նման է կաշառք ստանալուն, այն տարբերությամբ, որ ապօրինի վարձատրությունը տրվում է ոչ թե պաշտոնա-

տար անձին, այլ երրորդ անձին, ով պաշտոնատար անձի կամ հանրային ծառայողի վրա իր ազդեցության շնորհիվ մտադիր է հասնել վարձատրություն տվողի օգտին պաշտոնատար անձի/հանրային ծառայողի կողմից կոնկրետ վարքագիծ դրսևորելուն: Կարևոր պահանջ է այն, որ պաշտոնատար անձը/հանրային ծառայողը չի գիտակցում, որ իր վրա դրսևորվող ազդեցությունը պայմանավորված է որևէ վարձատրությամբ, այլապես, եթե գիտակցում է, որ իր վրա ազդեցություն գործող անձը վարձատրություն է ստացել և, այնուամենայնիվ, կատարում է վերջինիս խնդրանքը կամ պահանջը, ապա պաշտոնատար անձի արարքն արդեն կորակվի որպես կաշառք ստանալ:

Այն դեպքերում, երբ իրական կամ ենթադրյալ ազդեցությունը, ապօրինի վարձատրության դիմաց, օգտագործում է պաշտոնատար անձը՝ մեկ այլ պաշտոնատար անձի որոշակի վարքագծի մղելու մտադրությամբ, ապա արարքը պետք է որակվի ոչ թե 311.2-րդ, այլ 311-րդ հոդվածով՝ որպես կաշառք ստանալ:

Ինչ վերաբերում է ապօրինի հարստանալուն, ապա այս արարքի քրեականացումը պայմանավորված է Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 20-րդ հոդվածի պահանջը կատարելու ցանկությամբ: Վերջինս սահմանում է հետևյալը. Իր սահմանադրությունը և իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքները պահպանելու պայմանով՝ յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է քննարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ ձեռնարկելու հնարավորությունը, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ որպես քրեական իրավախախտում ճանաչվի անօրինական հարստացման արարքը, երբ դա կատարվում է դիտավորությամբ, այսինքն՝ պաշտոնատար անձի ակտիվների նշանակալից ավելացումը, որը գերազանցում է նրա օրինական եկամուտները, և որը նա չի կարող խելամտորեն

Ըստ Ձեր տեղեկացվածության՝ արդյոք ՀՀ-ում առկա՞ են ապօրինի հարստացման դեպքեր, և արդյո՞ք ապօրինի հարստացման դեմ պայքարի ընթացակարգերը ՀՀ-ում արդյունավետ են:

հիմնավորել: Ինչպես հետևում է ներկայացված դրույթից, ապօրինի հարստացման քրեականացումը պարտադիր և ուղղակի պահանջ չէ, սակայն ՀՀ-ն այն քրեականացրել է: ՀՀ գործող քրեական օրենսգրքի 310.1-ին հոդվածը պատասխանատվություն է սահմանում ապօրինի հարստանալու համար, այն է՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի՝ հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը, որոնք էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով, և եթե ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցագործության հատկանիշները բացակայում են:

Նշված հանցակազմի իմաստով, պատասխանատվության հարց ծագում է, եթե տարբերությունը 5 մլն դրամը գերազանցում է:

Ծանոթացեք օրենսդրական կարևոր փոփոխությունների:

2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով այս հանցակազմը լրամշակվել է. շեշտադրումը ոչ միայն գույքի ավելացման կամ պարտավորությունների նվազման, այլև անձի կողմից կատարվող ծախսերի վրա է: Միաժամանակ, փոփոխվել է նաև պատասխանատվության հիմք տվող գումարային շեմը՝ 5 մլն դրամից նվազելով 3-ի:

ՀՂՈՒՄՆԵՐ

Հղումները նախատեսված են Ձեզ հետաքրքրող նյութերի մասին հավելյալ գիտելիքներ ստանալու համար

1 Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիա, 04.11.1999, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24512 *(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)*

2 Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա, 31.10.2003, https://www.arlis.am/documentview.aspx?docID=48021 *(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)*

3 «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենք, ընդունված 2021 թ.-ի մարտի 24-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=156524 *(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)*

4, 6 Էդ. Ջաքարյանի, Գ. Գևորգյանի և Վ. Վարդանյանի վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 15.08.2014թ. թիվ ԵԿԴ/0002/01/13 որոշումը, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=14355223812293141 *(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)*

5 Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան 1976, էջ 1170, http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&dt=HY_HY&query=%D5%BA%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B6%D5%BB%D5%A5%D5%AC *(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)*

7 Лосев В.В. Понятия «предмет подкупа» и «предмет взятки» в международном праве и уголовном законодательстве Беларуси и России. В книге: Крымские юридические чтения. правонарушение и ответственность. 2017, էջ 195,

https://www.elibrary.ru/item.asp?id=29886151&pff=1
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

8 Кучма А.В. Нелегальные услуги как предмет взятки. В сборнике: Общество в эпоху перемен: современные тенденции развития. Материалы Междунар. науч. конф. студентов, аспирантов и молодых ученых, проводимой в рамках II Междунар. форума студентов, аспирантов и молодых ученых «Управляем будущим!». Сибирский институт управления - филиал РАНХиГС. 2014, էջ 400, http://www.fa.ru/fil/omsk/org/chair/fik/Documents/News/2014/12/%D0%9C%D0%B0%D1%82%D0%B5%D1%80%D0%B8%D0%B0%D0%BB%D1%8B%20%D0%A4%D0%BE%D1%80%D1%83%D0%BC%D0%B0_%D1%87%D0%B0%D1%81%D1%82%D1%8C2.pdf
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

9 Anti-corruption reforms in Armenia: 4th round of monitoring of the Istanbul Anti-Corruption Action Plan, 2018, էջ 141, https://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report-July-2018-ENG.pdf
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.);
Evaluation Report on Armenia on "Incriminations (ETS 173 and 191, GPC 2)", 2010,էջ 51;
http://www.parliament.am/library/Korupcia/greko/5.pdf
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

ԲԱՌԱՐԱՆ

Այս հատվածում ներկայացված են դասի նյութին առնչվող առանցքային եզրույթները և դրանց բացատրությունները: Դրանք Ձեզ կօգնեն դասի նյութն ավելի հեշտ ընկալել: Եզրույթների բովանդակությունն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 5 րոպե:

ԹՈՂՏՎՈՒԹՅՈՒՆ — Անձի կողմից մեկ այլ անձի ծառայողական գործունեության բացթողումների կամ խախտումների համար միջոցներ չձեռնարկելն է, ոչ իրավաչափ գործողություններին չարձագանքելը:

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ — Ուրիշի գույքն ապօրինի, անհատույց հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը:

ՀՈՎԱՆԱՎՈՐՉՈՒԹՅՈՒՆ — Անձի համար տարբեր բարենպաստ պայմանների չհիմնավորված ստեղծումն է:

ՇԱՀԱԴԻՏԱԿԱՆ ԴՐԴՈՒՄ — Իր կամ այլ անձի համար գույքային օգուտ ստանալու կամ գույքային ծախսերից կամ պարտավորություններից խուսափելու մղումն է: